ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2014թվականի N 16

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով , ՀՀ կառավարության 2011 թ-ի դեկտեմբերի 29-ի "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001 թ-ի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով , հաշվի առնելով Աշոտ Քոչարյանի դիմումը և համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը , համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկությունը ՝ ըստ որի նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական տարածքում գտնվող , քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարքերից , 06-043-0242-0001 ծածկագրով 1,0658 հա և 06-043-0238-093 ծածկագրով 0,9718 հա հողամասերը , արհեստական լճակ կառուցելու և ձկնային տնտեսություն հիմնելու նպատակով փոխադրելու ջրային ֆոնդի հողերի նպատակային նշանակությունը :

2.Համայնքի ղեկավարին ՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**